

Ճ Ա Շ Ա Կ

ՌԱՍԿՊԵՆԱ ԿՊՄՊՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Լ Ե Զ Ո Ի Ի (1)

Անգիր մատենագրութիւն մեր որ հեթանոս վիպածանական ձեւովն եկն մինչեւ ի սկիզբն Գ. դարու, այն է՝ ի դարձ սղգին ի քրիստոնէութիւն, նա մինչեւ ի սկիզբն Ն.ին, ոչ դադարեաց խսպառ, այլ գտեալ ինքեան ասպարէզ մեծ ի քրիստոնէութեան՝ մինչեւ ի գիւտ նշանագրաց մատուցաւ յառաջ ի ձեռն թարգմանչաց:

Թարգմանիչ անուամբ չէ պարտ իմանալ միայն, որպէս առ հասարակ կարծի, զայնոսիկ ի հայ վարդապետաց, որոց կրթեալ առ ոսո Մեսրոպայ՝ եղեն նմա օգնական ի թարգմանութեան Գրոց և գործոց եկեղեցւոյ հարց, և յորոց աշխատութենէ բաւական ինչ, թերեւս մեծագոյն իսկ մասն, եհաս առ մեզ: Յայտնի է ի պատմութենէ թէ իսկ և իսկ յետ դարձին Հայոց ի քրիստոնէութիւն՝ պաշտամունք եկեղեցւոյ, այն է՝ ընթերցուածք ի Գրոց և երգք որ էին յայնժամ Սաղմոսք, առ ի չգոյէ հայերէն դպրութեան, կատարէին յունարէն, և ապա յարգելու Սասանեանց զյունարէնն՝ ասորերէն: Եւ զի ժողովուրդն տգէտ էր յոյն և ասորի լեզուաց, հաստատեցան թարգմանիչք, այն է՝ արք յեկեղեցական կարգէ, հմուտք այնց լեզուաց և հայերենին. սոքա ուսանէին սուանձինն թարգմանել բերանացի ժողովրդեան յեկեղեցւոջ: Այսպէս Խորենացին կոչէ զՄեսրոպ թարգմանիչ վասն թարգմանչութեանն յեկեղեցւոջ, և ոչ վասն զի թարգմանեաց զԳիրս ի Հայ լեզու: « Ի վարդապետել երա-

(1) Տես զթիւ Ը.

ներոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և Բարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովդոցն լինէր յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ» (Խոր. Գ. ԽԷ.) : Այսպիսի թարգմանիչք թուի թէ սակաւք էին ի Հայս : Խորենացին վեց և եթ յիշէ թարգմանիչս, զՅովհան Եկեղեցացի, զՅովսէփ Պաղնացի, զԵղնիկ Կողբացի, զՂեւոնդ ոմն և զԿորիւն և զԱրձան, որք թուի թէ էին ուսեալք զթարգմանութիւն կամ զթարգմանչութիւն ի Մեսրոպայ, զի աշակերտս կոչէ զնոսա Խորենացին Մեսրոպայ : « Իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ (Մեսրոպայ) խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսան և երկու յայտնիսս (կանոնականս) և զՆոր կտակս յեղուլ ի Հայ բան, նաև աշակերտք նորա Յովհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի» (Խոր. Գ. ԾԳ.) . և այլուր (Գ. Կ.) . « Ապա առեալ Մեսրոպայ և Մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և միւս ընկեր նմին ի կողբ գեղջէ որում անուն Եղնիկ կոչէր, առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ, զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին (Ասորոց) սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով, զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցեն ի նոյն գործ : Որոց ընկալեալ զհրատուրական թուղթս սուտակասպասաց ոմանց, իբր թէ պատրաստին Մեծն Սահակ և Մեսրոպ զայլս առաքել ի Բիւզանդիոն, առանց հրամանի վարդապետացն իւրեանց նոյն ընդ նոյն չուեալ զնացին ի Բիւզանդիոն, և քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ՝ ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել : Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղեւոնդ և Կորիւն կարգային, յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն : Ապա ելանեն անդր Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր Մեծին Սահակայ և Մեսրոպայ » (Խոր. Գ. Կ.) : Ի ԿԱ. գլուխ նոյն դպրութեան Խորենացին զվեցեսին սոսա կոչէ առանձինն անուամբ թարգմանիչս : « Ապա եկեալ Բարգմանիչն մեր զորոց անուանն յիշատակեցաք յառաջագոյն, գտին զՄեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զթուղթսն և զկանոնս

ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով, և զստոյգ օրինակս Գրոց: Զորս առեալ Մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ Թարգմանեցին զմիանգամ Թարգմանեալն փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ: »

Վորիւն, ժամանակակից և միջամուլս, զնոյն անուանս յիշէ բաց յԱրձանայն, իբրեւ գործակիցս Սահակայ և Մեսրոպայ ի Թարգմանութեան Գրոց, աւելի մանր պատմութեամբ: « Զամենայն ընտրութիւնս նշանագրոյն . . . յօրինեալ և յանկուցեալ՝ ի Թարգմանութիւն դառնային (անդէն ի Սամոսատ) հանդերձ արամբք երկու, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յՆիկեղեաց գաւառէն, և երկրորդին՝ Յովսէփ անուն, ի Պաղանական տանէ: Եւ եղեալ սկիզբն նախ յԱռական Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ: » Եւ այլուր, « Որոց (Սահակայ և Մեսրոպայ) դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուզարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Նդեսացւոց, զՅովսէփ զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Նզնիկ անուն յայրարատեան գաւառէն ի Վոյք գեղջէ, զի յասորական բարրառոյն զնոցին հարց սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուցեան: Իսկ Բարսեղ Դանլացի հասեալ ուր առաքեցանն, և կատարեալ գհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ՝ անցեալ զնային ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք, Թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին: Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին՝ Վորիւնս, և մատուցեալ յարէին յՆզնիկն, իբրեւ առ ընտանեպոյն անդակից ի Վոստանդինական քաղաքին, և անդ միարանութեամբ հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Յետ սյնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք . . . գային երեւելով աշխարհին Հայոց: Իսկ երանելոյն Սահակայ զեկե-


ղեցական գրոց գումարութիւնն (էր) կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ : Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնկաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնն հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք » : Զայլ ոք թարգմանիչ անուամբ , բաց ի Սահակայ և ի Մեսրոպայ և ի վեցեցունց աշակերտացն յիշելոց , ոչ գտանեմք ուրեք ի ժամանակակից պատմութեան :

Յետին մատենագրաց հնարք են առանց վաւերական վկայութեան յաւելուլ զթիւ թարգմանչաց և զնեւ աշակերտակից և գործակից Եղնկայ զՌաւիթ Անյաղթ , զՄամբրէ , զՌմն Մուշէ , զԵղիշէ , զԱրձան ոմն արծրունի , զԱզան , և զայլ եւս վաթսուն , որք որպէս թէ ի գտանել նշանագրաց ընտրեցան և չոքան յազգս ուսանել իմաստասիրութիւն և արուեստախօսութիւն , և առնել թարգմանութիւն յԱղեքսանդրիա և յԱթէնս և յայլ գաւառս : Այսպէս գտանեմք « ի նախադրութեան ներբողենի Խաչին » , այն է՝ ի յառաջաբանի մթին և անխմատ ճառին զԽաչէ , ընծայելոյ Դաւթի Անյաղթի : Աւելորդ է ասել թէ այսպիսի անհեղեղ վկայութիւն որ , թէ պակաս , եօթն հարիւր ամօք յետոյ է քան զթարգմանիչս , չէ ամենեւին հաւատարմութեան արժանի , մանաւանդ զի յօրինիչ յառաջաբանին է տգէտ ոք : Ահա յառաջաբանն . « Դաւթի փիլիսոփայ ասացեալ . . . աշակերտ Սահակայ և Մեսրոպայ . զոր ասեն քուերորդի Մովսիսի քերթողահօրն , ի վաթսնիցն որ ընտրեցան ուշեղք և փափկածայնք և երկարողիք , և ամենայն առաքինութեամբ զարդարեալք , որք յետ հարիւր մետասան ամի Սրբոյն Գրիգորի ի գտանել զորոյ ազգիս ընտրեցան , և չոքան յազգս ուսանել իմաստասիրութիւն և արուեստախօսութիւն , և առնել թարգմանութիւն յԱղեկսանդրիա և յԱթէնս և յայլ գաւառս : Եւ որք ընդ նմա գնացին , Մամբրէ եղբայրն Աովսիսի , Մուշէ և Եղիշէ , Եզնակ և Արձան Արծրունի և Ազան : Եւ ի դառնալն , զի բազում ժամանակք էին անցեալ , և յուրով անցք անցեալ ընդ երկիրս . ընկենուլ զսուրբն Սահակ յաթոռոյն , և սպանանիլ Արտաշրի ի Սուրմակ քահանային ի սաղրելոյ , իշխանացն և յԱսորոց առաջնորդ կացուցանելն .

և յետ քսան և ութ ամի գիւտի գրոյն կոտորումն Արբոց Վարդանանց , և բաժանումն Հայրապետութեանն յերկուս . Յովհան Մանդակունի ի Պարսից կողման կաթողիկոս , և Գիւտ՝ ի կողմանն Յունաց , յաշակերտաց սրբոց քահանայիցն : »
Ըստ բանի յառաջբանին , Մամբրէ , Մուչէ , Աղան և այլք , հանդերձ Նզնկաւ և Արձանաւ , իբրեւ թարգմանիչ առաքեալք՝ դառնան յետս զինի այնչափ անցից որ անցին ի Հայս , յորոց մին էր և բաժանումն Կաթողիկոսութեանն . ապա հարկ է ընդունել թէ թարգմանիչքն Նզնիկ , Արձան դարձան ի Հայս յետ ամին 600 . ի , քանզի բաժանումն Կաթողիկոսութեանն եղեւ յամին 600 . ի : Թող զանպատեհութիւն ժամանակագրութեանն , զի յայնժամ հարկ է դնել զՆզնիկ և զԱրձան , զԴաւիթ Անյաղթ , զՄամբրէ , զՆզնիչէ , իբր երկերիւրամեայս ի դարձին իւրեանց ի Հայս , զՆզնկայ և զընկերաց նորա գիտեմք սակայն թէ դարձան ի Հայս առ կենդանութեամբն իսկ Սահակայ և Մեսրոպայ : Նրկորոք և մեծ անպատեհութիւն է դնել զբաժանումն Կաթողիկոսութեանն առ Գիւտաւ և Մանդակունուլ , և զԳիւտ դնել կաթողիկոս ի բաժնին Յունաց , և զՅովհան Մանդակունի՝ ի բաժնին Պարսից , մինչ Փարսեցին , ժամանակակից , գիտէ զՄանդակունին յաջորդ Գիւտայ : Առաջին կաթողիկոս ուրոյն ի բաժնին Յունաց կարգեցաւ յամին իբր 600 . ի , ոչ Գիւտ որ աւելի քան 130 ամօք յառաջ է քան զբաժանումնն զայն , այլ՝ Յովհան ոմն Բազարանեցի և ոչ Մանդակունի : Սխալ է նաեւ դնել յետ քսան և ութ ամի գիւտի նշանագրաց զպատերազմն Վարդանանց , որ իբր քառասուն և աւելի եւս ամօք յետոյ է քան զայն գիւտ , ապա թէ ոչ պատերազմն այն զիպէր առ կենդանութեամբն իսկ Սահակայ :

(Մատուցի յստաջ)

Ա . Մ . Գ .



Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ՀԱՒԱՏԱԼ ՍՆՈՏԵԱՑ (1)

«Եւ այլ ինչ ոչ են վիշապք, բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, և կամ ձկունք անարիք ծովականք, զորոց ասեն թէ լեռնարերձք և մեծամեծք են, և որս և կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց մանր մանր ինչ ձձիք կամ անասունք: Եւ ոչ որս երբեք, որպէս մարդկան, արարեալ է վիշապաց կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ զօք ի թագաւորադպեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. որպէս զՍղէքսանդրէ խաբէին դեւք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զդեւ ի շիշ, կարծեցուցանէին թէ Սղէքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեսց զդիւցապաշտս Հայոց՝ եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս (Հայոց). և ի սնտոի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս և Հրեայք որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է շինել զՆորուսադէմ և ժողովել զՀրէայս, և անդ թագաւորել նմա նոցա:»

«Եւ այնպէս ջանայ սատանայ զի զամենայն ոք ի բարուք ակնկալութենէ վրիպեցուցէ, և ի սնտոի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահադինք երեւեցցին ոմանց, առնուցուն զնոսս ի սպաշտօն: Կարծեցուցանէ թէ նհադք ինչ իցեն գետոց, և չահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի նհանգի իմն և կամ ի չահապետի. զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեացէ: Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի էօջ կերպարանս երեւէր, և երբեմն փոկ լինէր և լուզորդաց ընդ ոտս անկեալ հեղձ-

(1) Տես զՅիւ է.

ուցանէր . այլ կամ կինն կին կայր , կամ փոկն փոկ : »

« Նոյնպէս և զոր շահապետ վայրաց կոչեն , ոչ մերթ մարդ երեւէր և մերթ օձ , որով և զօձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել : Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձեւ երեւէր , և միւս անգամ մարդակերպ , որպէս յառաջագոյնն իսկ ստացաւ , թէ որ մարմնաւոր ինչ է՝ յայլ կերպարանս չկարէ փոխել : »

« Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երեւիցին , դիւաց կերպարանք են այն . և եթէ ի դաշտս երազազանք ձգիցին , և հեծեալք իրրև զմարդիկ զհետ էրէոյ արշաւիցեն , կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց . և եթէ ի գետս ի կանանց ինչ ի կերպարանս երեւիցին , սատանայի կերպարանք են » (Նզն. Ա. ԻՊ. ԻԶ.) :

Ապաքէն այր կորովի և կիրթ մտօք , որպիսի Նշնիկն էր , չլինէր ջատագով անհեղեղ կարծեաց , որպէս « դիւաց զօդս գնդեւոյ և պարզեւոյ և կերպս ի կերպս լինելոյ , » եթէ չէր ակն ածեալ իւրոյ ժամանակին վարդապետութեան : Չեն սակայն զարմանք նախնի Հայոց հաւատալ այնպիսի ցնորից , մինչ Ներոպական ազգք , և կարի իսկ երեւելիքն որ անցեալ կան այսօր ի գլուխ քաղաքակրթութեան Ներոպայ , ոչինչ աւելի քան երկերիւր ամօք յառաջ չգտան պակաս քան զմերն ի հաւատալ սնտեաց : Թող զդիւթս և զվհուկս (fée) , որոց ազգեցութիւն մեծ էր յՆերոպա , սիլֆիտքն և կնոմիտք և օկտիւնք , ոգիք օդոյ , հողոյ և ջրոյ , և նախիրք իմն առ տնին ոգւոց , որպէս ուրուականք և խուճապք և ցնորք (revenant, lutin, follet, farfadet) , զորս նախնի Հայք ընդհանուր անուամբ Կալս կոչել սովոր էին , յածէին ժամանակաւ յամենեցուն բերանս յՆերոպա , և առասպելաց որ զնոցանէ՝ ասղութեամբ և ահիւ ունին զնէր ոչ ուամիկն միայն , այլ և դիւրահաւան գիտունք ժամանակին :

(ԻՄաստոսցի յառաջ)

Ա. Մ. Գ.



ՁԸՆՏԵԼՈՒԹԵՆԷ ԱՆԱՍՆՈՑ

Մասկերք ամենայն գեղեցիկք փառաւորք , զոր սովոր եմք նկատել մերթ ի գառազդի ակամայ իմն հիացմամբ , և խոյս ի նոցանէ տալ միշտ ի լերանցամէջս և ի խորս անտառաց , զպէտս կերակրոյ իւրեանց պաշտեն սպանութեամբ :

Զի՛նչ արդեօք իցէ ընդ անմեղութիւն գառին և ընդ բնածին վայրենութիւն գիշախանձ գազանաց , իշխանաց երկրի : Իբրև զի երանիկ երջանիկ է կով ի քաղել լեզուաւ զխոտս ճարակաչատ մարգաց , և ի վայելել բշմամբ բառաչմամբ որով տայ իմանալ ինչ ի հաճոյս անցաւոր կենաց աշխարհի . փորձ երբեք նա ոչ փորձէ ի կորուստ համազգեաց իւրոց կամ չհամազգեաց . անխռով հանդարտիկ է հոգի նորա իբրեւ գյստակ ջուրս սղբեր , ուստի հարկանէ մեղմով պիտիաք ծարաւոյ ի տօթաժամու աւուրն :

Այլ բարք անասնոց վայրենեաց են ընդհատ ամենեւին ի խոնարհ բարուց խոտաճարակ անասնոց : Առիւծու ցանկացելոյ բարք են արկանել զճիրանունս իւր ի ձակատ մատակին առ ի քծինս տալոյ նմա . քանի՛ խիստ է այս նշանակ սիրոյ և հակառակ ցանկալի խառնից խոտակերաց :

Տեսցուք արդ թէ մարթիցի՛ ածել զգազանաբարոյս ի համբոյր և յընտելութիւն մարդկան , կամ իցէ՛ հնար մղկեզին առիւծու լինել արօտակից խաչանց և մտանել ի մակաղատեզս հօտից մերոց՝ առ ի վայելել քաղցրութեամբ զընկերասէր կեանս անասնոցն հեղոց . հասցէ՛ երբեք բնաջինջ գազանաց լինել յերեսաց երկրի , որպէս ասեն թէ առ սուկառ սակառ նուազին մսակերք ի դարուց հետէ . կամ առ լամէ՛ գիշակեր լինել առիւծու , և վազեր և կատուի վնոյն բարս ունել , ուր մեծ կէս մասն յանասնոց սնանի խոտաճարակ :

Մարդոյ , քանզի իշխէ ամենայն շնչաւորաց որ ի վերայ երկրի , ի կարի է ունել ապդեցութիւն խորին յամենայն անասունս . և բազում յոյժ են զոր ածեալ է ի համբոյր ընտելութեան , որպէս զճի , զարջառ և զլուն և զայլ նոյն-

պիսիս , յորս պարծի մարդ իբրեւ յօգնականս իւր վաստակաւորս :

Նթէ կերակուր այլ ընդ այլոյ տացէ ոք անասնոց մնակերաց ի սնունդ , զոր օրինակ բուտ փոխանակ մսոյ , փոփոխեսցի տակաւ և բոյս բարուց նոցա : Սբալանցանի , բնախօս մեծանուն , հացիւ լոկով փորձէր կերակրել արծուի մի զոր սնուցանէր . չհաճէր հաւն առնուլ զառաջինն զսնունդն այլալիերպ , և աւուրս չորս նքթէր չարաչար . յամառէր բնախօսն և չտայր այլ ինչ ուտել հաւուն . պնդէր և սա վասն չուտելոյ հաց , մինչեւ մերձ լինել ի մեռանել . յայնժամ տայր հաց խառն ընդ մսոյ , և արծուին սովամահ առնոյր ուտէր զկերակուրն և հալէր դիւրաւ : Այլ նուագեցուցանէր բնախօսն օր ըստ օրէ զմասն մսոյ կերակրոյն , մինչեւ հաւն շաղախիւր շատանայր հացիւ եւեթ և սնանէր որպէս մսով : Նոյն դարձեալ նօթի ունէր աղաւնի մի , որոյ ընդաբոյս բարք են խորչել ի մսոյ , վարժել զնա բռնաբար ուտել զմիս . և հուսկ յաղթէր յամառութեան հաւուն , որ այնպէս իմն ընդելնոյր ընդ մտղէնս , մինչեւ ի բաց մերժել զայլ ամենայն կերակուր : Այսպէս չրջինն ընդաբոյս բարք արծուոյն և աղաւնւոյ . զայր արծուին յընտելութիւն սնուցանելոյն , և խորագէտ միամիտն լինէր : Այլ թէ սնուցչին թողեալ էր զնոսա որպէս սովորն էին , ըստ բուսոյ բարուց սնանել արծուոյն մսով և աղաւնւոյն բտով կերակրել , չէր մարթ ոչ սմա լինել հնարագէտ և ոչ նմա մերկանալ զվայրենի բարոյս իւր :

Օրինակ զայս մարթի թէպէտ առ սակաւ սակաւ ընտելացուցանել անասուն մի վայրի արկեալ զրուամբ , այլ զիսորդ մարթիցի սնհետ առնել զժանիս առիւծու և զմազիւս արծուոյ :

Տես զհաւաստարիւմ ազգ շան , զոր սնուցանեմք առ տնին . նկատեսցիր զնա և ընդ հանգամանօք վայրենութեան . չիք ինչ խախր ընդ կազմած նորա առաջին և ընդ այժմուն . շուն ընտասուն բարուք եւեթ է ընդհատ ի շանց վայրենեաց , որպիսի երբեմն ազգն համօրէն էր , և այնմ պատճառք են սնունդն այլզուանակ որով սնանին առ մեզ շունք :

Ո՞վ կարէ փոփոխել զկանոնս սնանելոյ ամենայն անաս-

նոց որ ի վերայ երկրի • զի այսմ չմարթի լինել, ապա և չէ հնար ամենայն անասնոց գալ յընտելութիւն հասարակաց : Բնութեան լիցին պէտք յաւիտեան ժամեաց առիւծու և մագլաց արծուոյ և թունոց իժից, զորս արկցէ ի կիր յօգուտ իւր : Չէ յիրաւի տրտնջել մարդոյ ի տես պատառելոյ գայլոյ գառն մի անպարտ յանխնայ, և ոչ՝ յորժամ տեսցէ ոք աղանի մի ձջել հեծել ընդ ճիրանամբք անողորմ անգեղ • զի այս ամենայն վճարի ըստ կարգաց բնութեան : Ապակա- նութիւն և եղծուած անդուստ ի բնէ եղան յօրէնս արար- չութեան • չիք ինչ որ զօրէնս արարածոց չրջել կարկցէ :

Եթէ չէր ազգ մասկեր թռչնոց, ծով համատարած ծած- կէր զիսկամբք բիւրուք բիւրուք • և եթէ ոչ գիշախանձ գագանք ուտէին զգէշս անասնոց, օդ համատարած ընյր նեխութեամբք, և սատակէին շնչաւորք ամենայն • և եթէ խոտակեր առ հասարակ էին ազգք անասնոց, տեսիլ ահա-ւոր հասանէր մեզ տեսանել յայնժամ ամենայն ուրեք • մարտ պատերազմի անդուլ անդադար մղէին անասունք ընդ մի- մեանս վասն յետնոյ մնացորդի բուսոց, վասն չղի միոյ խո- տոյ, զոր ձգձգեալ ի բերանոյ միմեանց յափշտակէին նըք- թեալք սովաբեկք սովալլուկք : Ապա չեն այլ ինչ կեանք՝ եթէ ոչ ապականութիւն :

Արդ, այս ամենայն զոր ասաք ի մէջ՝ շատ իսկ են ի հաւան ասել զմեզ՝ եթէ չէ մարթ համօրէն անասնոց գալ առ հասարակ ի համբոյր և յընտանութիւն, և զի բազումք յազգաց անասնոց կացցեն մնացցեն յաւիտեան շաղկակերք գիշախանձք, ըստ ընդարոյս բարուց իւրեանց :

Պ. Կ. (1)

Յ. Գ.

(1) Ձայս գեղեցիկ հատած ևս գիտնական յօրինեալ է նորով հայ- երենիւ Տ. Պ. Էմիրզեան բժշկի, որում շնորհ ունիմք այս երկրորդ անգամ :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Տ Ա Կ Ո Տ ՈՐ Ք Ի Ն Ա Խ Ն Ե Ս Ց

Թ է ՉՍՐ Է ՉՍՐԱԿՆՈՒԹԻՒՆ

Այնպէս իսկ է հեռն նախանձուն, որոյ չիք այլ ինչ համեմատ: Նախանձոտն յառաջ քան ընդ որում նախանձին՝ զանձն տանջէ: Նա ոչ երբեք դադարէ ի մեղաց, այլ միշտ ընդ նոյն թաթաւի, որպէս խող ի տղմի. և եւս չար քան զդեւս խնդայ ընդ վնասս, և ընդ ընկերին կարիս: Յորժամ ի վշտի զօք տեսանիցէ, յայնժամ հանգչի և ոգի առնու. և զայլոց թշուառութիւն՝ իւր փառաւորութիւն համարի, և զբարիս ընկերացն՝ անձինն հիքութիւն. և ոչ ինչ թուի նմա հեշտ, բայց միայն ընկերին տրտմութիւնն: Եւ զայնպիսիսն իբրեւ զոռնս կատաղիս սարտ էր քարիլոծ առնել, և իբրեւ զդեւս հալածականս, և իբրեւ զընդզայս ծովու վնասակարս: Եւ իբրեւ զկոյաղնդիւսն որ աղբով ստարարին՝ նոյնպէս և նոքա այլոց չարօք և վշտօք: Հասարակաց իմն թշնամիք, և սրտերազմողք ամենեցուն բնութեան են:

Այլ բամբասել զչարակնութիւն թերեւս դիւրաւ ոք համարեսցի. բայց սարտ է գիտել՝ թէ զիսրդ ապրիցեն յախտէն: Եւ արդ զիսրդ բուժիցիմք յայնպիսի չարեաց. թէ իմանայցեմք զի սրպէս պոռնկին չէ օրէն յեկեղեցի մտանել, նոյնպէս և ոչ չարակն. և եւս յորվազոյն սմա՝ քան նմա. իսկ նա աւանիկ անխտիր իմն թուին իրքն, վասն որոյ և ոչ պէտք ինչ են փութոյ: Բայց թէ յայտնի վնիցին՝ թէ չարիք են, դիւրաւ ի բաց մեկնիցիմք: Լաց այսուհետեւ, և աշխարեա, յոգոց հան, և աղաչեա վստուած. և ուսիր որպէս վասն անհնարին մեղաց ստրջանալ և ապաշխարել. և եթէ այնպէս ստրջանայցես, վաղվաղակի զերծանիցիս յախտէն:

Իսկ ո՞ ոչ գիտիցէ, ասէ, թէ չար է չարակնութիւն: Եւ անտեղեակ չէ իսկ ոք: Ո՞վ ոք երբեք ստգիւտ զանձն

համարեցաւ չարահիմեալ . ո՞վ ոք երբեք պաղատեցաւ առ Աստուած վասն այնր ախտի՝ լինել նմա քաւիչ . ոչ ոք երբեք . այլ թէ պահիցէ , և սակաւ ինչ արծաթ աղքատաց տայցէ , թէպէտ և բիւրապատիկ չարահիմիցէ , չհամարի չար ինչ գործեալ , որ այնպիսի ժանտ ախտուք վարակեալ իցէ , որ քան զամենայն ախտ սաստիկ իցէ :

Գլխատեսցուք այսուհետեւ զբազմագլուխ գազանն . քանզի բազում կերպարանք են չարահիւսութեանն : Զի թէ որ զսիրելին միայն սիրէ՝ չիցէ ընդհատ ի մաքսաւորէ , որ զանմեղն եւս ատեայ՝ ո՞ւր կամիցի կեալ . զիտորդ մարթիցի ապրել ի գեհէնէն , որ եւս չար քան զհեթանոսն եղեւ . վասն որոյ և յոյժ իսկ զուիայ :

Զիք որ այնպէս սովոր է ամբարտաւանեղ՝ որպէս առ ի բազմաց փառաւորութիւնն . զի ակնկոյրս և անազատս և սուտակասպասս և կեղծաւորս գործէ : Վասն է՞ր կոչէին Փարիսեցիքն զիւռհար զԲրիստոս , ո՞չ ապաքէն վասն զի փառաց բազմաց ցանկացեալ էին . կամ ուստի՞ բազում ուղիւ վճիռս բերէին զմմանէ առաքելքն , ո՞չ ապաքէն զի չէին անկեալ յայնպիսի ախտս : Զի չիք ինչ և չիք իսկ որ այնպիսի անօրէնս և անմիտս գործէ , որպէս առ ի բազմաց փառաց տենչալ . և ոչինչ մեծարոյս և աղամանդեայս առնեն , որպէս զայն անտես առնել : Արի իսկ առաքիլի ոգւոց պէտք են այնմ որ այնպիսի յորձանաց ընդդէմ կալ ոգորիցի և բռնութեանն հողմոց : Զի յորժամ ի բարութեան իցէ , քան զամենեսին զանձն լաւ համարի . և յորժամ զնորին հակառակն կրիցէ , փորել և թաղել զանձն կամիցի . և նոյն իսկ նմա գեհէն և արքայութիւն է , յորժամ այնու ախտու մխրճեալ ընդ ջրով կայցէն :

Սե արդ , աղէ ասա , նախանձաւորութեանն ինչ արժանի իցէ այն , և ոչ ողբոց և արտասուաց . յայտ իցէ ամենեցուն թէ արտասուաց : Դու զայն իսկ առնիցես , որ ընդ այնպիսի մեծարելոյն նախանձիս , որպէս զի թէ կապեալ ոք և տանջեալ և ի բազում գազանաց ցրցտեալ տեսանիցէ (զուք) , և նախանձաւոր լինի վիրացն և հարուածոց նորա : Զի որչափ մարդիկ ի ժողովրդեանն իցեն , նոյնչափ նմա կապանք , նոյն-

քան և տեարք : Նաև այն իսկ կարի անհնարին աղէտք են , զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ այլ եւ այլ միտս ունին . և զոր լսենն և որում ծառայենն , այնոմ համարին ամենքեան , և չքնենն ինչ . այլ այլազգ այլում թուի և այլգունակ այլում . և ինքեանք որպէս կամին՝ հաստատեն : Եւ արդ քան զոր ալիս , քան զորչափ մրրիկս չիցէ այն դժնդակագոյն . քանզի և հպարտանայ իսկ վաղվաղակի այնպիսին յախորժութենէն , և ընկղմի երազ երազ : Զի միշտ ի վտանգի կայ , և ոչ երբեք ի հանդարտութեան : Յառաջ քան զթատերցն հանդէս և քան զմարտան , ի բանիցն իսկ ի վտանգի կայ և ի դողութեան . և յետ թատերն գրաւ լինելոյ , պարտասի և մեռանի ի տրտմութենէն , և կամ դարձեալ անչափ ուրախ լինի , որ եւս չար տրտմութեան է : Եւ զի խնդութիւնն չէր սուղ քան զտրտմութիւնն , յայտ յոգւոցն քայքայանացն է . քանզի թեթեւամիտ գործէ և զբօսեալ և զբաղեալ : (Ոսկ . Մատթ . Ճառ . ԺԵ .)



ԱՆՑՔ Ի ՀՐԷԱՍՏԱՆ

Անտիոքոս զիրօնս Հրէից եղծանէր , և նախ նա բռնադատէր ազգին կռապաշտել , անհնարին չարչարանօք յալամայ կամս նոցա , և վիշտս ի վերայ հասուցեալ . ապա երթեալ յԵրուսաղէմ , զտաճարն և որ ի նմա նուէրքն Աստուծոյ էին՝ կողոպտէր , և ի տաճարին զԱրամազդայ ողոմպկական պատկերն կանգնէր : Իսկ ի Շամիրն ի Գարիզին լէրին՝ Արամազդայ օտարասիրին մեհեան շինէր . և զայն ի Շամլրտացւոց ստէպ զնա աղաչելոյ : Առ այնու ժամանակաւ Մատթիաս ոմն ի քահանայիցն , որդի Սասանեայ ի Մովդիիմ գեղջէ , դիմէր ի վերայ զօրավարացն Անտիոքայ որդւովքն հանդերձ , հայրենի օրինացն վերակացու լինել ի ՃԾԳ . ողոմպկադին :

* * *

Յետ Մենեղեայ քահանայապետի Հրէից սպանման ի մանկանէ Անտիոքայ , որ զազգն մատնեայ Անտիոքայ երեւելոյ ,

Աղկիմոս որ չէր յազգէ քահանայապետութեանն՝ ի շուրջանակի պատասպարութենէ՝ յաջորդէր զքահանայապետութիւնն : Վասն որոյ Ռնիայ քահանայապետի որդի երթեալ յեգիպտոս՝ յԱրեգ քաղաքի զմոսպոլիս շինէր , որ և Ռնիայն իսկ կոչէր , յորում և տաճար նման Յրուսաղեմի շինէր : Իսկ Աղկիմոս ընդ Յուդայի Մակարեայ գրգռեալ՝ յետ ոչ բազում ժամանակաց Աստուծոյ հարուածովք անկեալ սատակէր . և ամենայն ժողովուրդն Հրէից Յուդայի Մակարեայ զքահանայապետութիւնն տային : Իսկ նորա առեալ զրպարուն՝ առ Հռովմայեցիս հրեշտակազնայ լիեալ խօսէր . և վճիռ հրամանաց ի սինկղիստոսացն ելանէր՝ բարեկամս և զօրավիգն Հռովմայեցւոց համարել զՀրէսայս :


* * *

Անտիգոնոս Հրէից թագաւորութեանն ի վերայ յարուցեալ և բազում պատերազմունս հասուցեալ՝ սպանանի : Աստ վախճանի և թագաւորութիւնն Հրէից : Աստ և օժեան առաջնորդ , զորմէ Դանիէլ մարգարէանայ , առնու վախճան : Մինչև ցՀերովդէս՝ օժեալք առաջնորդք քահանայապետքն էին , որք կային վերակացուք սպգին Հրէից , սկսեալք առ Դարեհիւ նորոգութեան տաճարին և դադարեալք առ Հիւրկանոսիւ . և որ ի միջի ամքն ինին սոցա՝ են ամք ՀԶԳ , որպէս Դանիէլ ի մարգարէութեանն կանխաւ կարապետեալ ասէ . Եւ ծանիցես և ի միտ առցես յելից բանին տալ պատասխանի :

Հերովդէս Անտիպատրեայ , որում չէր անկ , զթագաւորութիւնն Հրէից յԱւգոստեայ և ի Սինկղիստոսէն Հռովմայեցւոց առնու . և յետ սորա՝ սորին որդիք մինչև ցհուսկ յետին Յրուսաղեմացւոց պաշարումն : Եւ այնուհետեւ ոչ եւս պայազատ ի պայազատէ ի քահանայական ազգէն կային քահանայք Աստուծոյ , և ոչ մինչեւ ցկեանս ըստ մովսիսեան օրինացն . այլ աննշանաւորք ոմանք , այլք երբեք երբեք , ոմանք տարեւորք , ոմանք եւս սակաւք , ի Հռովմայեցւոց զօրավարացն գնէին զքահանայապետութիւնն :

* * *

Յիսուս , օժեալն Աստուծոյ , Տէր մեր , ըստ մարգարէու-
թեանցն որ վնմանէ էին , գայ ի չարչարանս յիննուտասներ-
րորդի ամի Տիբերի թագաւորութեանն : Ըստ որում ժամա-
նակի և յայլ յունական յիշատակս գտաք , ըստ նմին օրի-
նակի բանից պատմեալ , թէ արեգակն նուաղեաց , Բիւթա-
նիա շարժեցաւ , Նիկիայ մեծ մասն կործանեցաւ : Գրէ և
Փղեգէոն զայս ձեւ օրինակի բանից՝ թէ ի չորրորդում ամին
Երկերիւրորդի և երրորդի ողիմպիադին եղեւ մեծ նուազու-
թիւն արեգական , քան զոր յառաջագոյն ոչ ոք գիտէր , և
գիշեր ի վեցերորդ տունջեանն եղեւ , մինչեւ աստեղաց յեր-
կինս երեւեւ , շարժումն մեծ ի Բիւթանիա , և մեծ մասն
Նիկիայ կործանեցաւ : Ըստ սոցին ժամանակաց և Յովսեփոս
պատմէ՝ թէ Յառուրս Պենտեկոստէից դղրդիւն և սօսալիւն
նախ զքահանայիւքն պատէր , և ապա բարբառ յանկարծակի
անդուստ ի ներքուստ ի տաճարէն լսելի լինէր զայս ձեւ օ-
րինակի՝ թէ Գնամք աստի , գնամք : Եւ այլ իմն նոյն Յով-
սեփոս գրէ , որպէս թէ Պիղատոս դատաւոր առ այնու ժա-
մանակաւ զկայսերական պատկերն գիշերի՝ ուր չէր օրէն
ի տաճարին եմոյժ կանգնեաց , և մեծի խռովութեան և
կռուոյ սկիզբն արկ ի մէջ չրէից . և անտի բազում վիշտք
ի վշտաց հասանէին ազգին չրէից : Փղակոս Առուղիոս՝ Աղեք-
սանդրիայ և Նգիպտոսի ոստիկան առաքի ի Տիրերեայ , և
բազում նենգութիւն ազգին չրէից գործէր : (Ն.ս. Քրոն. Բ.)



ԹԷ ՈՐՊԷՍ ԶԶՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ՝ ԱՅՆՊԷՍ Է ՄԱՐԴ ԱՂՔԱՏ
ԱՌ ՄԵՏԱՏԱՆ

« Բղխեսցեն , ասէ , ջուրք , » այսինքն է զկէտս մեծա-
մեծս հանդերձ մանրերամ ձկամբք , որ պէսպէս կերպու-
րանս ունիցին ըստ իւրաքանչիւր ազգաց , և այլափոխ ան-
ուանս և գոյնս և մարմինս և կերակուրս , և կողմանս ի բնա-
կութիւն՝ ի մեծն և յանդորր ծովուն : Ո՞ր որսորդք , որ
միշտ ի ծով անդր չրջիցին , իցեն բաւական արկանեւ ընդ
թուով զանուանս բիւրազգի ազգաց ձկանց որ վտառ

վտառ , երամ երամ չըջին . և կամ ո՞ ոք ի մարդկանէ որ ան-
դէն ի բարձունս կղզեաց ծերացեալ իցէ , և զամենայն ա-
ւուրս կենաց իւրոց ի խոնաւ բնակութիւնսն հանեալ իցէ ,
կարիցէ տալ զնշանս իւրաքանչիւր ազգաց և կերպարանաց
ձկանց : Պատմեն որսորդքն որ ի հնդիկ ծովուն ունին միշտ
զյատակս՝ զձկանց , և զայլազգ կերպարանաց յայտ սունեն
որսորդք որ յնգիպտացւոց ծովուն աշխատին , և Մարի-
սացիքն տան զրոյց զպէսպէս նմանութեանց ձկանց որք լի-
նին ի ծովուն որ է ի սահմանս նոցա , և զնորանշան կերպա-
րանաց ձկանց պատմեն որ ի կղզիս հեռաւորս բնակեալ են :
Զայս ամենայն ազգի ազգի ազգս ձկանց հանդերձ մանուձք
և մեծամեծօք անպատում զօրութեամբն առաջին հրաման
բանին Աստուծոյ ժողովեաց ած ի կենդանութիւն :

Այսր ամենայնի խառնաղանձ զեռնոց ոչ մի բարք և ոչ
մի բնութիւն է , և ոչ միազգի ծնունդ , և ոչ ստեամբք և
աշխատութեամբ սնուցանեն , այլ խկ և խկ իբրեւ անկանին
ի ջուրս , եթէ ձուք իցեն՝ կենդանի ձկունք դտանին , և եթէ
ծնունդք իցեն՝ առանց աշխատ ինչ առնելոյ զմարտն սնա-
նին : Եւ ամենայն ազգք ձկանց , առանց խառնակութեան
ընդ միմեանս , կան մնան իւրաքանչիւր ըստ ազգի իւրեանց
բնութեանն , և ոչ որպէս աստ առ մեզ լինի , զի խառնա-
կութեամբ ընդ միմեանս կորուսանեն անասունքն զազգս
իւրեանց . այսպէս ծնանին իշակէսք , այսինքն է ջորիք : Եւ
ոչ ունին ձկունք ատամունս ի բերանս իւրեանց , որպէս
ուռի արջառ և ոչխար որ առ մեզ սնանին , և չիք ի ձկունս
որ որոճիցէ , բայց միայն մի ազգն որ անուանեալ կոչի սկա-
րոս , որպէս և պատմեն զնոյանէ ոմանք : Եւ վասն այնորիկ
ուռին սոքա սուր ատամունս առ արագ մանրեւ կլանել զինչ
ուտիցենն . զի մի յորժամ յամիցեն ի ծամելն , թափիցէ
ի բերանոյ նոցա ջուրն զկերակուրն զոր ուտիցեն . զի եթէ
ոչ սուր ատամամբք վաղվաղակի մանրէին կլանէին զոր ինչ
ուտէինն , կորուսանէր հանէր ի բերանոյ նոցա ջուրն զկե-
րակուրն : Եւ կերակուր ձկանց բազում անգամ ինքեանք
ինքեանց լինին , թէսլէտ և է կիսոցն այլ կերակուր յայտ
կարգեալ . քանզի կէսքն զմամուռս ջուրոցն ուտեն , և կէսքն

զսիկն և զաւազն , և կէսքն զլսոտ ինչ որ բուսանի ի մէջ ջուրցն՝ ճարակին , և նոյն բաւական լինի , հանդերձ այլ եւս բազում ձկամբք որ զմիմեանս ուտեն . զի փոքրն որ ի նոսա՝ կերակուր է աւազին , և դարձեալ եթէ աւազն այլում աւազի դիւլեսցի , նա՞ նորա լինիցի կերակուր . քանզի միմեանց որովայնից հնազանդեալ են ի փոքրկանց մինչև ի մեծամեծս :

Որպէս երեւի մեզ , ի մարդիկ բոտ նմին օրինակի գործ գործի . զի որ տկարն է ի մէջ՝ հարստին կայ ի ծառայութիւն : Աղէ , զի՞նչ առաւել իցէ մարդ աղքատ քան զճրկնիկն փոքրիկ առ մեծատանն , որոյ բացեալ զբերանն յագահութիւն՝ յանյագ ժողովեսցէ զարարս այլոց . զի մին առնու ինչ որ ոչ իւր իցէ յաղքատէ անտի , և առնէ յաւելուած ի վերայ մթերից իւրոց , և դարձեալ միւսն եւս ըստ նորին նմանութեան որ քան զնա հարստագոյն իցէ՝ դայ հասանէ բռնաբար ի վերայ նորա , և հանէ զառ և զաւարն որ յայլոց յափշտակեալ է . և անդ է տեսանել չար քան զչարս , և ազահ քան զազահս որ զմիմեամբք ելեալ խաղայցեն : Բայց զայս պարտի ամել զմտառ ազահն անաւագակեր՝ թէ դուցէ իբրեւ ձկան հասանիցէ ի վերայ նորա ցանց կորստեան , և յորժամ համարեսցի թէ վազեաց անց զամենայն չարեօք և մօտ իցէ զերծանել , հասցէ նմա յանկարծակի կորուստ ապականութեան . զի հանդերձեալ պահին չարեացն նորա պատիժք պատուհասից , որ յայտնելոց են ի վախճանին և յորոյ չիք հնար զերծանել և ապրել : (Բարսղ . Վեցօր . Է .)

Բ Բ Գ Ո Ւ Ն Ք Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի

Ո՛վ հրակայք Նեղոսի , սրգոյ շքեղ կայան ,
Քանի՛ պանծութեամբ աչք հային ի ձեզ մարդկան :
Առաջի պերճ զլիսոց ձերոց լերինը ցածնուն ,
Հեռի ի դաշտս բստուեր ձեր իջանէ անհուն :
Բայց մարդ ճրնոյ ըզձեզ , նորա ջախջախ բնութիւն
է որ շքնորհեաց կեանս ձեզ , եւ անմահութիւն :
Քանի՛ցս ի լրութեան նստեալ զոտամբ ձերով՝
Կոչեմ շուրջ ըզձեօք ես զանբաւրն զայն ժողով

Մերընդոց անցելոց , մարդկան եւ դիւցազանց ,
 Զորս ալեօքըն դարուց հեղեղն էառ եւ անց .
 Քաղաքք , ցեղք , պետութիւնք , արքայք , խալիֆք , սուլտանք ,
 Անուանք երբեմըն պերճք , այժմ են սին ուրուականք :
 Դուք միայն կայք յետ նոցա , եւ էք հաւատարիմ
 Գիւանք ժամանակին , թագաւորաց շիրիմ ,
 Գիտութեան , պաշտաման , լեզուի մըթերանոց ,
 Հրաշակերտ , առեղծուած եւ ուսումն իմաստնոց :
 Ընկալ ապա զիմ հարկ , դու որոյ ձեռին թափ
 Ի վիժի նոցա , պինդ եւ կարծրը քան զերկաթ ,
 Գրոշմեաց զիմ տրկար երգս : Անցէք , դարք , անհամբեր ,
 Ազինք , իշխանք , անցէք բոլորքդ իբրեւ զըստուեր ,
 Այս որմք են յաղթանակք իմ , մահու դիմագրաւ ,
 Նա ասեմ՝ թէ « Երգք իմ մեռանելոց չեն բնաւ » :

ՏԸԼԻԼ

Ա. Մ. Գ.

Կ Ա Ղ Ն Ի Ե Ի Ե Ղ Է Գ Ն

Յաւոր միում կաղնի ասէր Եղեգան .
 Իրա՛ւ է քեզ լինել զէից ամբաստան .
 Թըռչուն փոքրիկ բեռըն ծանր է ի
 քո թեւ .
 Հողմ մեղմաշունչ որ ի դիպաց
 Ըզջուրոց երեսս յուզէ թեթեւ՝
 Տայ քեզ կըքել գետնատարած .
 Ուր ճակատ իմ , բարձրը հանգոյն
 կաւկասու ,
 Ոչ զարեւու նըշոյս եւեթ արգելու ,
 Այլ եւ զմըրկաւ առնէ իսկ խաղ .
 Որ հիւսիսին թըրի քեզ՝ ինձ սիրք
 խաղաղ .
 Թէ քո ծընեալ ընդ հովանեաւ էր
 իմով
 Որ զըրբացիս սլահէն անխոով ,
 Ոչ կըրէիր այսչափ ինչ վիշտ ,
 Ի փոթորկէ զերծ կէիր միշտ .
 Բայց բուսանել է քեզ հաճոյ
 Զխոնաւ ափամբք յիշխանութեան
 անդ հողմոյ .
 Անիրաւել ի քեզ ընութեան ինձ թը-
 լի : —

Գում քո ընդ իս , ասէ ցնա թուփն ,
 ի բարի
 Ծնանի բարուց . այլ թո՛ղ զայդ հոգ
 դու ի բաց .
 Հողմք ինձ սակաւ քան քեզ յառնեն
 ահագին .
 Կըքիմ յերկիր , այլ ոչ բեկայց : Ան-
 դրատին
 Բո զլուխ ի բնէ տոկալ կարաց
 Յայժմ ահաւոր բախմանց նոցին .
 Այլ մընացուր իրացն ելից : — Զայս
 ասաց ,
 Եւ անդէն իսկ յեզերց երկնի ետ
 ընդ ետ
 Շընչէր ուժգին հողմ , ահեղ նետ
 Քան զորս կըրէրն ի ծոց ցայնժամ
 Հիւսիսի .
 Պինդ կայ կաղնին . Եղէգնըն ծուի
 Բուռն առնէ հողմն անդէն հըզոր ,
 Մինչեւ խըլել տակալոտոր լկին ,
 Զորոյ զըլուփն ի վեր կըցէր ի յեր-
 եւ ի զըժոխս հասանէին ոտք նորին :
 ԼԱՅՅՈՒԹԷՆ Ե . Գ .

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ձ Ո Ի Ի

Ա

ԱՆՑԱՆԵԼ ԶԱՆՑԱՆԵԼ ԶՈՄԱՄԲ, ԸՍՏ ԻՆՁ. Տէկէ ճը կամ Բանէ ճը շար քերականց ըլլալ: *Արութեամբ և իրաց քաջութեամբ անցանէր զանցանէր զՀերակղիւ: — *Այլ թերեւս բարակ ինչ հանդերձիւք (հպարտանայցես) . այնու սարդք իսկ անցանէն զանցանէն զքե: — *Այս անցանէ զանցանէ ըստ բնութիւն:

ԱՆՑԱՆԵԼ ՅԱՇԽԱՐՀԷ. Դռնիլ: *Յանցանէն յաշխարհէ թագաւորին Խոսրովու:

ԱՆՑԵԱԼ ԶԱԻՈՒՐԲՔ. Երբը անցացա՞ծ . ծերացա՞ծ . պարտա՞ծ: *Նս ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրքք իւրովք: — *Սա ինքն անցեալ էր զաւուրքք բազմօք: — *Աբրահամ և Սառա ծերացեալք էին և անցեալ զաւուրքք:

ԱՆՅՈՒՑԱՆԵԼ ԶԱՆՅՈՒՑԱՆԵԼ. Ետն զԱՆՑԱՆԵԼ ԶԱՆՑԱՆԵԼ: *Սարդանբազղոս անցոյց զանցոյց զամենեքումք որ յառաջ քան զնա էին՝ բարեկեցութեամբ և յուրութեամբ:

ԱՆՓՈՅԹ ԱՌՆԵԼ. Կոփալ . հոփը ըլլալ: *Անփոյթ արարեր զինէն, ասէ Տէր: — *Նս անփոյթ արարի զնոցանէ: — *Անփոյթ արարին զիրաւանց: — *Մի անփոյթ առներ զչնորհացդ որ ի քեզ են: — *Ոչ անփոյթ արար զուսմանն:

ԱՆՓՈՅԹ ԼԻՆԵԼ. Կոփացալ . անխոս Բողոքիլ: *Քարեղէն պատկերքն անփոյթք եղեալք տգեղանան:

ՅԱՆՔՆԻՆՍ ԱՆԿԱՆԵԼ. Ժիոյը շարիլ . խելք Կոփանիլ: *Որ զընարութիւնն այսպիսի իրաց ինչ ուսանել փութային, չքաւորեցան և յանքնինս անկան:

ՅԱՆՕԹ ԱՌՆՈՒԼ. Կոփ առնել: *Անկաւ երկաթն ի ջուրն . և վայեաց, և ասէ . Ո՛հ, Տէր, և զայն յանօթ առեալ էր: — *Շնորհքն ոչ մարդկեղէն ինչ զօրութիւն առնուն յանօթ, այլ զիւրն ունի բնակաւոր:

ԱՇԽԱՏ ԱՌՆԵԼ. աշխարհընել . յոփնեցընել: *Մինչև յե՞րբ աշխատ առնէք զանձն իմ: — Զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ: — *Մի՛ ինչ աշխատ առներ զդա:

ԱՇԽԱՏ ԼԻՆՅԵԼ . աշխարհիլ . յոբնիլ : *Չամենայն գիշերս աշխատ եղեալք : — *Դու խնայեցեր ի դղմենին յոր ոչ եղեր ինչ աշխատ : — *Ձի արքայ աշխատ ինչ մի՛ լիցի :

ԱՇԽԱՐ ԳՆԵԼ . լալ սղթալ . Վայնասուն ընել : *Աշխար եղեալ լացին ամենայն սահմանք աշխարհաց : — *Նգին աշխար մեծապէս և լացին զնոսա :

ՅԱՇԽԱՐՀԷ ՓՈԽԻՄ . Բռնել : *Սերեւկոս փոխեցաւ յաշխարհէ : — *Ձայս օրինակ յաշխարհէ փոխեցան : — *Մեզ լաւ է զի փոխիմք աստի ի մարդկանէ :

ԸՍՏ ԱՇԽԱՐՀ ՀԱՆԵԼ . ատարել . ատար : *Տարիկնոս Սիպերբոս եղիտ կազանս , դանս , կոճեղս , բանոս , պահս , պարուանդս , անուրս , չղթայս , ըստ աշխարհ հանել , ի պղընձահաստ տալ :

ՅԱԶՍ . ատջեւը . ալիքն : *Բարի ես դու յաչս իմ : — *Յաչս նախարարացն ոչ թուիս դու բարոքք : — *Նղեն պարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն :

— կամ՝ համեմարութեամբ . նայելով : *Յաչս այնր ասպաշխարութեան՝ մերս որպէս ստուեր է : — *Յաչս այնր խընդըրուածոց՝ մերս որպէս նմանութիւն է :

ՅԱԶՍ ԳՆԵԼ . ալիք ատնել . բռնի տեղ չընել . արհամարհել : *Մեք (յուսացեալ եմք) յամենակալն Աստուած որ կարող է զայնոսիկ որ զմեզ յաչսն զնեն՝ . . . ի մի չունչ ոգւոյ զօրութեան սատակել : — *Սակաւուք (հալածել) զբազումս որ զաշխարհս յաչս զնէին :

ԱԶՍ ԱՐՁԱԿԵԼ , ԱՐԿԱՆԵԼ . ալի տնիել . ցանկալ : *Մի ինչ աչս արձակէք դուք յաւար ի կապուտ գիտականցն անկելոց : — *Արձակեաց զաչս իւր զհետ հոմանեաց իւրոց : — *Արձակեցեր զաչս քո առ քաղղէացիսն : — *Արկ կին տեսառն իւրոյ զաչս իւր ի վերայ Յովսեփայ :

ՅԱԶՍՅ ՀԱՆԵԼ . ալիքն հանել : *Հանցուք զնա յաչաց իւրոցն խարեցելոց : — *Նոյն իսկ հանէ առնն յաչաց :

Յ. Գ.

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԳԻՍՈՒՍ

Յ. ԳՈՒՐԳԵՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇՅԱՆ
